Կարգապահական գործ թիվ ԿԳ-24170

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵՅԻ ԿՈՉՈՒԲԱԵՎԻՆ, ՄԵՐԻ ՎԱՐԴԱՆԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար՝ Կարինե Բաղդասարյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Ծովինար Քուրքչյանի,

մասնակցությամբ՝ փաստաբաններ՝ Մերի Վարդանի Պողոսյանի և Արայիկ Ներսիսյանի,

քննության առնելով փաստաբաններ Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևին (արտոնագիր՝ թիվ 2606), Մերի Վարդանի Պողոսյանին (արտոնագիր՝ թիվ 3533) և Արայիկ Ներսիսյանին (հավատարմագիր՝ թիվ 117) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Արեն Մեհրաբյանի (**այսուհետև նաև՝ Դիմող**) ներկայացուցիչ Սամվելուհի Գրիգորյանը (**այսուհետև՝ Պատվիրատու կամ Դիմողի ներկայացուցիչ**), դիմելով ՀՀ փաստաբանների պալատ (**այսուհետև՝ Պալատ**), տեղեկացրել է, որ 2024 թվականի մարտի 25-ին դիմել է «Կոնտրա լեգեմ» փաստաբանական գրասենյակի Սպիտակ քաղաքի մասնաճյուղ՝ իր ամուսնու՝ Արեն Մեհրաբյանի քրեական գործով պաշտպանությունը գրասենյակի կողմից ստանձնելու համար: Գրասենյակի աշխատակից Գարիկ Սահակյանը հեռախոսազանգով կապ է հաստատել գրասենյակի տնօրեն Ալեքսանդր Կոչուբաևի հետ և վերջինս բարենպաստ ելք է երաշխավորել Դիմողին: Գործը ստանձնելու համար փաստաբանը Պատվիրատուից պահանջել է 1.200.000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: Պատվիրատուն պնդել է, որ վճարումը կատարվի անկանխիկ և խնդրել է իրեն հաշվեհամար տրամադրել:

թիվ ԿԳ-24170-2-Ա
29.01.2025թ.

Գրասենյակը Պատվիրատուին տրամադրել է գրասենյակի աշխատակից Գարիկ Սահակյանի հաշվեհամարը և Դիմողը փոխանցել է 880.000 (ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ պայմանով, որ մնացած գումարը կվճարի գործի ավարտին:

Դիմողի ներկայացուցիչը հավելել է, որ «Կոնտրա լեգեմ» փաստաբանական գրասենյակը Պատվիրատուի և Դիմողի հետ չի կնքել փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր:

Հաշվի առնելով այն, որ գրասենյակը կապ չի հաստատել Պատվիրատուի և Դիմողի հետ, Պատվիրատուն զանգահարել է գրասենյակ, և նույն օրը իրեն տեղեկացրել են, որ իր հետ կապ կհաստատի փաստաբան Անի Բադիկյանը: Նույն օրը փաստաբան Անի Բադիկյանը կապ է հաստատել Դիմողի հետ և պահանջել է գործի նյութերը: Փաստաբան Անի Բադիկյանի հետ համագործակցությունը դրական է եղել: Վերջինս մշտապես կապի մեջ է եղել Պատվիրատուի հետ և տեղեկացրել նրան գործի հետ կապված ամեն մի մանրուք: Որոշ ժամանակ անց Դիմողի ներկայացուցիչն իմացել է, որ փաստաբան Անի Բադիկյանն այլևս չի համագործակցում «Կոնտրա լեգեմ» փաստաբանական գրասենյակի հետ և չի հանդիսանում Դիմողի պաշտպանը: Պատվիրատուին տեղեկացրել են, որ Դիմողի գործով նոր պաշտպանն է լինելու փաստաբան Մերի Պողոսյանը: Պատվիրատուն հաճախ փորձել է կապ հաստատել թե՛ փաստաբան Մերի Պողոսյանի և թե՛ գրասենյակի հետ, սակայն հնարավոր չի եղել կապ հաստատել: Պատվիրատուն և Դիմողը բացարձակապես անտեղյակ են եղել, թե գործը որ փուլում է գտնվում:

Դիմողը և Պատվիրատուն 2024 թվականի հունիսի 4-ին ներկայացել են դատական նիստին, սակայն նիստի ժամանակ պարզվել է, որ այն հետաձգվել է: Հաջորդ դատական նիստին՝ 2024 թվականի օգոստոսի 2-ին Դիմողը և Պատվիրատուն ներկայացել են նիստերի դահլիճ, սակայն փաստաբանն ուշացել է առանց դատարանին տեղյակ պահելու: Դահլիճի հսկիչը տեղեկացել է, որ փաստաբան Մերի Պողոսյանը գտնվել է 2-րդ հարկում, գնացել է նրան դիմավորելու: Փաստաբանը շատ շփոթված, անպատրաստ ներկայացել է նիստին՝ խնդրելով հետաձգել նիստը և հայտարարել է, որ տվյալ պահին գտնվում է մեկ այլ գործով դատական նիստի: Փաստաբան Մերի Պողոսյանն առանց Դիմողի և Պատվիրատուի հետ համաձայնեցնելու դատարանին միջնորդել է համաձայնեցման վարույթ կիրառել:

Համաձայնեցման վարույթը կիրառվելուց հետո Մերի Պողոսյանն առանց Դիմողի և դատախազի հետ որևէ քննարկում ունենալու դուրս է եկել դատարանի դահլիճից: Դատարանը մի քանի անգամ նկատողություն է արել փաստաբանին էթիկայի կանոնները խախտելու համար: Այդ նիստից հետո Պատվիրատուն զանգահարել է փաստաբանական գրասենյակ և պահանջել է նոր փաստաբան: Գրասենյակից Պատվիրատուին տեղեկացրել են, որ հաջորդ դատական նիստին կամ մասնակցելու է Կոչուբաևը, կամ նոր փաստաբան կներկայանա:

Ստացվում է, որ այս ամբողջ ընթացքում հետաձգվել է երկու նիստ, իսկ տեղի ունեցած մեկ նիստի ժամանակ էլ փաստաբանը պահանջել է համաձայնեցված վարույթ կիրառել, որի հիմքով այդ նիստը նույնպես հետաձգվել է: Երբ Պատվիրատուն հասկացել է, որ իրեն և Դիմողին խաբել են և ոչինչ չեն անում, մեծ դժվարությամբ կապ է հաստատել և փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևից պահանջել է, որպեսզի վերջինս հետ վերադարձնի գումարը, ինչին ի պատասխան փաստաբանը մերժել է՝ ասելով, որ աշխատանք են կատարել կարող է վերադարձնել միայն 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամը՝ մեկ նիստի համար վճարվելիք գումարը: Փաստաբանը պնդել է շարունակել գործը և թողնել իրենց աշխատել՝ խոստանալով, որ ներկա կգտնվի հաջորդ դատական նիստին և հենց նիստերի դահլիճից բաց կթողնեն

Դիմողին, այսինքն խոստացել է ելք: Նա նշել է, որ կապ չունի, թե ով է փաստաբանը, գործն իր հսկողության տակ է և այն կկարճվի հենց առաջին ատյանի դատարանում:

Օգոստոսի 15-ին ներկայացել է փաստաբան Արայիկ Ներսիսյանը, ով պարզապես ապահովել է ֆիզիկական ներկայություն և ծանոթ չի եղել գործին: Դատական նիստը սկսելուց 15-20 րոպե անց փաստաբանը զանգահարել է փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևին և պարզել, թե որ հոդվածով է Դիմողի մեղադրանքը: Պատվիրատուն, տեսնելով իրավիճակի լրջությունը, փաստաբանին տրամադրել է իր մոտ առկա երկու բնութագիր, որոնք հնարավոր է էական նշանակություն կարող էին ունենալ գործի համար: Փաստաբանը դրանք վերցրել է և միջնորդել կիրառել արագացված վարույթ: Արդյունքում Դիմողը դատապարտվել է ազատազրկման 5 տարի ժամկետով:

Պատվիրատուն դիմումին կից ներկայացրել է վճարման անդորրագրի և դատավճռից քաղվածքի պատճենները: Հետագայում տրված բացատրություններով Պատվիրատուն ներկայացրել է Դիմողի կողմից իրեն տրված լիազորագիրը և «Կոնտրա լեգեմ» փաստաբանական գրասենյակի կողմից կազմված 09.09.2024թ. կազմված ծանուցագրի պատճենը, որով իրեն խնդրել են ներկայանալ գրասենյակ, ստորագրել գրասենյակի հետ համաձայնության հիման վրա կազմված պայմանագիրը և վճարել գումարի մնացած մասը:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 04.11.2024 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 07.11.2024թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ առաջին ատյանի դատարանի վճռից հետո հրաժարվել են «Կոնտրա լեգեմ» փաստաբանական գրասենյակի հետ համագործակցելուց և դիմել են այլ փաստաբանի, սակայն «Կոնտրա լեգեմ» փաստաբանական գրասենյակն առանց Դիմողին տեղեկացնելու բողոք է ներկայացրել ՀՀ վերաքննիչ դատարան:

Դիմողը 04.11.2024թ. ներկայացրել է դիմում ՀՀ փաստաբանների պալատի նախագահին և խնդրել լրացուցիչ ժամկետ ապացույց ներկայացնելու համար, ինչը Պալատի նախագահի կողմից բավարարվել է:

Դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացվել է էլեկտրոնային կրիչ, որի պարունակությունը հնարավոր չի եղել հետազոտել: Դիմողի ներկայացուցիչը նշել է, որ այդ կրիչում առկա են ձայնագրություններ, որոնցով հաստատվում է այն, թե ինչպես է փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը իրեն հանձնարարության կատարման արդյունքի երաշխիք տալիս և 18.12.2024թ. տեղի ունեցած Հանձնաժողովի նիստի ժամանակ Դիմողի ներկայացուցիչը միացրել է այդ ձայնագրությունները և նշել, որ մինչև Հանձնաժողովի մյուս նիստը այլ կրիչով կներկայացնի այդ ձայնագրությունները նույն ծավալով: Հանձնաժողովի հաջորդ նիստը կայանալու պահի դրությամբ Հանձնաժողովի համար հասանելի է դարձել ի սկզբանե ներկայացված էլեկտրոնային կրիչի պարունակությունը և այն հետազոտվել է:

2. <u>Պատասխանողների համառոտ բացատրությունները.</u>

<u>2.1 Փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի բացատրությունը.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևին (արտոնագիր՝ 2606) առաջարկվել է ներկայացնել բացատրություն Սամվելուտի

Գրիգորյանի դիմումի վերաբերյալ:

Բացատրությամբ փաստաբանը Պալատին տեղեկացրել է, որ իրեն է պատկանում «Կոնտրա ընկերությունների խումբ» ՍՊ ընկերությունը: Ընկերությունն ունի նաև մասնաճյուղ Լոռու մարզի Սպիտակ քաղաքում: Որպես կանոն, իր կողմից վստահորդին կամ վերջինիս ազգականներին երբևիցե չի երաշխավորվում գործի քննության կատարման արդյունք, չեն տրվում երաշխիքներ կամ հավաստիացումներ: Նշված հանգամանքը բառացիորեն ամրագրված է նաև «Կոնտրա ընկերությունների խումբ» ՍՊԸ-ի և Պատվիրատուների միջև կնքվող յուրաքանչյուր պայմանագրում: Ուստի Սամվելուհի Գրիգորյանը կամ Արեն Մեհրաբյանը չէին կարող բացառություն կազմել, չնայած այն հանգամանքին, որ տարբեր պատճառաբանություններով վերջիններս հետաձգել են պայմանագրի ստորագրման համար Ընկերության գլխամասային գրասենյակ այցելությունը: Այնուամենայնիվ, Արեն Մեհրաբյանի պաշտպանությունը ստանձնելու հարցում պայմանավորվածություն ձեռք բերելուց անմիջապես հետո պահանջել է վերջիններիս անձը հաստատող փաստաթղթերի լուսանկարները՝ պայմանագիր կազմելու նպատակով:

Անձնագրերի լուսանկարները ստանալուց հետո բազմաթիվ անգամներ հեռախոսազանգի միջոցով խնդրել է նրանցից յուրաքանչյուրին այցելել գլխամասային գրասենյակ՝ Սայաթ-Նովա 40 հասցեում գտնվող, որպեսզի ստորագրվի այն, սակայն տարբեր պատճառաբանություններ բերելով ոչ Արեն Մեհրաբյանը, և ոչ էլ Սամվելուհի Գրիգորյանը որևէ քայլ չեն ձեռնարկել պայմանագրի ստորագրման ուղղությամբ:

Փաստաբանը նշել է, որ իր կողմից թույլ չեն տրվել փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված կետերի խախտումներ, իսկ իր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու՝ Դիմողի ներկայացուցչի դիմումը ենթակա է մերժման կարգապահական վարույթ հարուցելու հիմքի բացակայության պատճառաբանությամբ:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 04.11.2024 թվականին փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևին առաջարկվել է Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը 14.11.2024թ. ներկայացրած բացատրությամբ ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև հայտնել է, որ Լոռու մարզի գրասենյակի կառավարիչ Գարիկ Սահակյանի, Երևան քաղաքում գործող գրասենյակի իրավաբան Մերի Մեսրոպյանի հայտարարություններով, ինչպես նաև 09.09.2024թ. ծանուցմամբ հիմնավորվում է, որ իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր կնքելու վերաբերյալ ձեռնարկված միջոցները եղել են առկա և իրական:

Փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը չի մասնակցել Հանձնաժողովի նիստերին, միջնորդել է գործը քննել իր բացակայությամբ՝ հիմք ընդունելով իր կողմից ներկայացված բացատրությունները:

<u>2.2 Փաստաբան Մերի Պողոսյանի բացատրությունը.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Մերի Պողոսյանին (արտոնագիր՝ 3533) առաջարկվել է ներկայացնել բացատրություն Սամվելուհի Գրիգորյանի դիմումի վերաբերյալ:

Բացատրությամբ փաստաբանը Պալատին տեղեկացրել է, որ իր վարույթում ունի հանձնված մի քանի տասնյակ քրեական գործեր, որոնցից է նաև թիվ ԼԴ/0220/01/24

քրեական գործը: Նշել է, որ թիվ ԼԴ/0220/01/24 քրեական գործով Դիմողին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, չունենալով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք, գտնվելով ոչ սթափ վիճակում, վարել է տրանսպորտային միջոց:

Նշված հանգամանքներով քրեական գործը հարուցվել է այն ժամանակ, երբ Դիմողը թիվ ԼԴ2/0045/01/21 և ԼԴ/0020/01/22 քրեական գործերով դատապարտվել է և գտնվել է 4 տարի 6 ամիս փորձաշրջանի մեջ:

Փաստաբան Մերի Պողոսյանը բացատրությամբ նշել է, որ թիվ ԼԴ/0220/01/24 քրեական գործն ընկերության գլխավոր տնօրեն Ալեքսանդր Կոչուբաևը հանձնել է իրեն 25.06.2024թ.: Գործը ստանձնելուց հետո հեռախոսակապի և WhatsApp հավելվածի միջոցով կապ է հաստատել Դիմողի և Պատվիրատուի հետ:

Պատվիրատուի պնդումը, որ փաստաբանն իր և Դիմողի հետ հետադարձ կապը չի ապահովել, չի համապատասխանում իրականությանը, քանի որ փաստաբան Մերի Պողոսյանը զանգահարել և զրուցել է Դիմողի ու Պատվիրատուի հետ: Վերջիններիս հետ կապ է հաստատել 096221414, 091353655, 043616100 և 091353655, 043616100 WhatsApp հավելվածի միջոցով և ունի բազում հաղորդագրություններ և զանգեր: Բացատրությանը կից ներկայացրել է Հաղորդագրությունների և զանգերի վերաբերյալ ապացույցները:

Դիմողի ներկայացուցիչը դիմումով հայտնել է, որ հուլիսի 4-ին ներկայացել են նիստին և դատական նիստի ժամանակ են իմացել, որ նիստը հետաձգվել է: Այս հանգամանքը նույնպես իրականությանը չի համապատասխանում, քանի որ և՛ Պատվիրատուի, և՛ Դիմողի հետ առկա են հաղորդագրություններ առ այն, որ ինքը միջնորդելու է, որ նշված նիստը հետաձգվի, պայմանավորված նրանով, որ նույն օրը վաղորոք նշանակված նիստ ունի և օբյեկտիվորեն Երևանից Վանաձոր չի կարողանա հասնել: Նիստը հետաձգելու մասին դիմումում դատարանին խնդրել է նիստը նշանակել համաձայնեցված և նախընտրելի օր, որը դատարանի կողմից բավարարվել է և հաջորդ դատական նիստը նշանակվել է օգոստոսի 2-ին, ժամը՝ 12:00-ին:

Դիմողի հետ խնդիրներ երբևիցե չի ունեցել, սակայն Պատվիրատուն անընդհատ խնդիրներ է ստեղծել՝ փաստաբանի հետ խոսելուց հետո զանգել է գրասենյակ, բողոքել է, որ փաստաբանը զանգերին չի պատասխանում: Հուլիսի 8-ին իր կողմից նման բաներ անելու համար, փաստաբանը WhatsApp հավելվածի միջոցով նրան հաղորդագրություն է ուղարկել, որից հետո Պատվիրատուն դադարել է անտեղի զանգեր կատարել և ստել:

Դրանից հետո Դիմողի հետ խոսել է և բացատրել, որ գործի հանգամանքներն այնպիսին են, որ այս պարագայում համաձայնեցված վարույթ կիրառելը լավ տարբերակ է և հնարավորություն կլինի ընդհանուր հայտարարի գալ հանրային մեղադրողի հետ հօգուտ Դիմողի: Վերջինիս բացատրել է նաև համաձայնեցման վարույթի հետևանքները: Իրար հետ համաձայնության են եկել և փաստաբանը օգոստոսի 2-ի դատական նիստի ժամանակ համաձայնեցման վարույթի միջնորդություն է ներկայացրել, որը նիստով հաստատել է պաշտպանյալը և այն բավարարվել է դատարանի կողմից: Հանրային մեղադրողի հետ բանակցությունների արդյունքում առաջարկ է ստացել 3 ամիս ազատազրկում և այդքանով խնդիրը կլուծվեր, քանի որ նախկինում դատված փորձաշրջանի մեջ գտնվելու ժամանակ Դիմողը նոր հանցանք է կատարել, սակայն Պատվիրատուն հրաժարվել է, վիճաբանություն է ստեղծել, պահանջել է վճարված գումարը վերադարձնել, որպեսզի փաստաբան Անի Բադիկյանին հանձնի գործը, ով Դիմողին կարդարացներ:

Օգոստոսի 2-ի նիստի ժամանակ դատարանի կողմից էթիկայի կանոնները խախտելու համար նկատողություն ստանալու վերաբերյալ հայտնել է, որ նման բան նույնպես չի եղել և

դատարանի կողմից իր նկատմամբ որևէ սանկցիա չի կիրառվել:

Պատվիրատուի ագրեսիայի պատճառով լարված իրավիճակով պայմանավորված գործը օգոստոսի 15-ից շարունակել է փաստաբան Արայիկ Ներսիսյանը:

Բացատրությանը կից ներկայացրել է WhatsApp հավելվածում կատարված հաղորդագրություններից սքրինշոթներ: Նշել է նաև այն, որ դիմումին կից չի ներկայացվել որևէ ապացույց առ այն, որ ինքը Դիմողի գործը վարելու ժամանակահատվածում անպատասխան է թողել վերջինիս հաղորդագրությունները կամ զանգերը, դատարանի կողմից ստացել է նկատողություն էթիկայի կանոնների խախտման կապակցությամբ:

Խնդրել է կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի բացակայության հիմքով մերժել 22.08.2024թ. Սամվելուհի Գրիգորյանի ներկայացրած դիմումը:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 04.11.2024 թվականին փաստաբան Մերի Պողոսյանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

15.11.2024թ. բացատրությամբ փաստաբան Մերի Պողոսյանը հայտնել է, որ Արեն Մեհրաբյանի պաշտպանությունը ստանձնել է 2024թ. օգոստոսի 2-ին և կատարել է առավելագույնն՝ իր վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար:

Բացատրությանը կից ներկայացրել է ՀՀ Լոռու մարզի դատախազության գրության պատճենը:

<u>2.3 Փաստաբան Արայիկ Ներսիսյանի բացատրությունը.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Փաստաբան Արայիկ Ներսիսյանին (հավատարմագիր՝ 117) առաջարկվել է ներկայացնել բացատրություն Սամվելուհի Գրիգորյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբան Արայիկ Ներսիսյանը հայտնել է, որ ինքը 2024թ. օգոստոսի 15-ին ներկայացել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վանաձորի նստավայր, դատավոր Ա. Պողոսյանի նախագահությամբ կայանալիք դատական նիստին ներգրավվելու որպես մեղադրյալ Արեն Մերուժանի Մեհրաբյանի պաշտպան: Նախքան նիստը բավականին ծանոթացել է քրեական գործի նյութերին, այնուհետև ներկայացել դատական նիստին, հակառակ դեպքում ինքն իրեն ուղղակիորեն թույլ չէր տա առանց քրեական գործի նյութերին ծանոթանալու ներկայանալ դատական նիստին: Դիմողի ներկայացուցչի պնդումը, թե իբր փաստաբան Արայիկ Ներսիսյանը չի տիրապետել գործի նյութերին, առնվազն իրականությանը չի համապատասխանում:

Փաստաբան Արայիկ Ներսիսյանը նշել է, որ ինքը, ներգրավվելով և մասնակցելով նշված դատական նիստին որպես պաշտպան, ընդմիջում է խնդրել, որպեսզի Դիմողը կարողանա գնալ և դրսում կայանված իր մեքենայից բերի իրեն վերաբերող փաստաթուղթը դատարանին տրամադրելու նպատակով: Ընդմիջման ժամանակ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի հետ կապ չի հաստատել, շատ հեշտ է դա պարզել, քանի որ դատական նիստի ձայնագրությունում առկա կլինի ընդմիջման ժամանակը, իսկ ինքը նույնիսկ պատրաստ է տրամադրել իր բջջային հեռախոսը համեմատելու և համոզվելու համար, կամ դա հնարավոր է պարզել այլ միջոցներով, այսինքն նշվածի մասին Պատվիրատուի հայտնածը ևս աղերս չունի իրականության հետ:

Փաստաբանը չի ցանկացել մեկնաբանել այն, թե իբր ինքը հարցրել է Դիմողին, թե որ

հոդվածով է վերջինիս մեղադրանքը: Դեռ ավելին, նույնիսկ դատարանի կողմից դատավճիռը հրապարակվելուց հետո Դիմողն իրենից իր գոհունակությունն է հայտնել:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 04.11.2024 թվականին փաստաբան Արայիկ Ներսիսյանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբան Արայիկ Ներսիսյանը 14.11.2024թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ անհրաժեշտ է լրացուցիչ ժամկետ՝ ձայնային կրիչը ներկայացնելու համար:

Փաստաբան Արայիկ Ներսիսյանը 18.11.2024թ. ներկայացրել է դիմում ՀՀ փաստաբանների պալատի նախագահին և խնդրել լրացուցիչ ժամկետ՝ ապացույց ներկայացնելու համար, ինչը Պալատի նախագահի կողմից բավարարվել է:

Փաստաբան Արայիկ Ներսիսյանը 25.11.2024թ. ներկայացրել է թիվ ԼԴ/0220/01/24 քրեական գործի ձայնային կրիչը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 23.09.2024թ. թիվ 364-Ա/ԿԳ-24170 որոշմամբ փաստաբան Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև նաև՝ Կանոնագիրք) 3.1.3-րդ և 3.1.10-րդ ենթակետերի,** իսկ փաստաբաներ Մերի Վարդանի Պողոսյանի և Արայիկ Ներսիսյանի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Կանոնագրքի **2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

27.09.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Սույն կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 27.11.2024թ. կազմել է եզրակացություն:

27.11.2024թ. սույն կարգապահական գործը հանձնվել է Հանձնաժողովին:

Եզրակացությամբ Աշխատակիցն առերևույթ հաստատված է համարել միայն սույն որոշման 5-րդ բաժնում նշված փաստեր № 1-2 և 4-12-ը:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

Ալեքսանդր Կոչուբաևի մասով.

1. «Կոնտրա ընկերությունների խումբ» փաստաբանական գրասենյակն, ի դեմս գրասենյակի գլխավոր տնօրեն փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի, Դիմողի կամ Պատվիրատուի հետ չի կնքել թիվ ԼԴ/0220/01/24 քրեական գործի շրջանակներում իրավական օգնություն ցույց տալու գրավոր պայմանագիր: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի բացատրություններով, ինչպես նաև առկա չէ այս փաստը հերքող որևէ ապացույց:*

2. Սամվելուհի Գրիգորյանի կողմից՝ որպես սույն կարգապահական վարույթում քննարկվող փաստաբանական ծառայությունների վճար, «Կոնտրա ընկերությունների խումբ» փաստաբանական գրասենյակի Սպիտակ քաղաքի մասնաճյուղի ղեկավար Գարիկ Սահակյանի հաշվեհամարին փոխանցվել է 880.000 ՀՀ դրամ գումար, որը հանդիսացել է կողմերի համաձայնությամբ սահմանված՝ թիվ ԼԴ/0220/01/24 քրեական գործի շրջանակներում փաստաբանական ծառայության մատուցման ընդհանուր գումարի մասը: *Նշված փաստը հաստատվում է վճարման հանձնարարագրի պատճենով և 09.09.2024թ. ծանուցագրի պատճենով, կողմերի բացատրություններով, ինչպես նաև չի հերքվում որևէ այլ ապացույցով:*

Մերի Պողոսյանի մասով.

3. Փաստաբան Մերի Պողոսյանը ստանձնել է Արեն Մեհրաբյանի շահերի պաշտպանությունը թիվ ԼԴ/0220/01/24 քրեական գործի շրջանակներում: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

4. Մերի Պողոսյանը միջնորդել է դատարանին թիվ ԼԴ/0220/01/24 քրեական գործով 04.07.2024թ. նշանակված դատական նիստը հետաձգելու վերաբերյալ, որի մասին նաև տեղեկացրել է Դիմողի ներկայացուցչին: *Սույն փաստը հաստատվում է նամակագրության պատճենով, ինչպես նաև կողմերի բացատրությամբ:*

5. 02.08.2024թ. նշանակված դատական նիստի ընթացքում փաստաբան Մերի Պողոսյանը միջնորդել է կիրառել համաձայնեցման վարույթ, որը դատարանի կողմից բավարարվել է: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ և թիվ ԼԴ/0220/01/24 քրեական գործով 02.08.2024թ. դատական նիստի ձայնագրության պատճենով:*

6. Համաձայնեցման վարույթ չի կիրառվել, քանի որ բանակցությունների արդյունքում Փաստաբանի և Դատախազի միջև համաձայնություն ձեռք չի բերվել պատիժը պայմանականորեն չկիրառելու շուրջ: *Սույն փաստը հաստատվում է 08.11.2024թ. գրության պատճենով:*

Արայիկ Ներսիսյանի մասով.

7. Փաստաբան Արայիկ Ներսիսյանը ստանձնել է Արեն Մեհրաբյանի շահերի պաշտպանությունը թիվ ԼԴ/0220/01/24 քրեական գործի շրջանակներում: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

8. Փաստաբան Արայիկ Ներսիսյանը ներկայացել է 15.08.2024թ. դատական նիստին: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, ինչպես նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

9. 15.08.2024թ. նախնական դատալսումների ժամանակ արագացված վարույթով դատաքննության հատուկ կարգ կիրառելու հարցի քննարկման ժամանակ Արայիկ

Ներսիսյանը ներկայացրել է արագացված վարույթ կիրառելու միջնորդություն: *Սույն փաստը հաստատվում է դատական նիստի ձայնագրությամբ:*

10. 15.08.2024թ. նախնական դատաքննությունների ժամանակ Դիմողը հայտնել է, որ իրեն պարզ է ներկայացված մեղադրանքը, համաձայն է մեղադրանքի հետ, առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչում, միջնորդությունը ներկայացրել է կամավոր, մինչև միջնորդությունը ներկայացնելը խորհրդակցել է իր պաշտպանի հետ, գիտակցում է արագացված վարույթ կիրառելու հետևանքները: *Սույն փաստը հաստատվում է դատական նիստի ձայնագրությամբ:*

11. 15.08.2024թ. դատավճռի համաձայն.

«Արեն Մերուժանի Մեհրաբյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 2-րդ մասով և նշանակել պատիժ ազատազրկում՝ 1 /մեկ/ տարի ժամկետով:

Վերացնել Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 21.10.2021թ. կայացված թիվ ԼԴ2/0045/01/21 դատավճռով 4 /չորս/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի սահմանված կարգով պատիժները մասնակիորեն գումարելով վերջնական պատիժ որոշել ազատազրկում՝ 5 /հինգ/ տարի ժամկետով:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաստատված չի համարում հետևյալ փաստը.

1. Փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը հանձնարարության կատարման արդյունք է երաշխավորել Դիմողին կամ Պատվիրատուին:

2. Փաստաբաններ Մերի Մողոսյանն ու Արայիկ Ներսիսյանը բարեխիղճ իրավաբանական օգնություն չեն ցուցաբերել Դիմողին:

6. <u>Պատասխանողների անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի և տեղեկանքի հավելվածի համաձայն՝ Ալեքսանդր Կոչուբաևը փաստաբան է հանդիսանում 24.05.2019 թվականից և 2019-2024թթ. ընկած ժամանակահատվածում ունի 1 կարգապահական տույժ (հիմնական տույժը մարված է, իսկ լրացուցիչ տույժը մարված չէ)՝ նկատողություն և 4 ակադեմիական ժամ վերապատրաստման դասընթաց «Դեոնթոլոգիա» թեմայով: Փաստաբանն իր նկատմամբ կիրառված վերոնշված կարգապահական տույժերը վիճարկում է դատական կարգով:

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Մերի Պողոսյանը փաստաբան է հանդիսանում 06.12.2023 թվականից և 2023-2024թթ. ընկած ժամանակահատվածում փաստաբանը չունի կարգապահական տույժ:

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արայիկ Ներսիսյանը փաստաբան է հանդիսանում 28.11.2023 թվականից և նույն տեղեկանքը տրամադրելու օրվա դրությամբ փաստաբանը չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

7.1 Փաստաբան Մերի Պողոսյանի կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի ենթադրյալ խախտումների մասով Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար (...):*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ նույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ *փաստաբանի մասնակցությամբ գործով ի վնաս փաստաբանի վստահորդի ընդունված ակտն ինքնին չի առաջացնում փաստաբանի կարգապահական պատասխանատվություն:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս **իր մասնագիտական պարտականությունները** կատարել ողջամտորեն, **բարեխղճորեն**, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***դատարանը համաձայնեցման վարույթ կիրառում է*** *հանրային մեղադրանքով նախնական դատալսումների ընթացքում՝* ***մեղադրյալի միջնորդության հիման վրա:***

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ***համաձայնեցման վարույթ չի կարող կիրառվել, եթե՝*** *մեղադրյալը չունի պաշտպան կամ* ***միջնորդությունը ներկայացրել է առանց պաշտպանի հետ խորհրդակցելու:***

Վերը նշված նորմատիվ իրավական ակտերի իրավական նորմերի, ինչպես նաև Կանոնագրքի կանոնների համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ փաստաբանը պարտավոր է իր վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ իր մասնագիտական պարտականությունները կատարել բարեխղճորեն, մասնավորապես՝ իրականացնել բոլոր

անհրաժեշտ գործողություններն իր վստահորդի հանձնարարությունը պատշաճ կատարելու համար:

Միաժամանակ գործում է փաստաբանի անմեղության կանխավարկածը, այսինքն փաստաբանը համարվում է անմեղ այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ Հանձնաժողովի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանությունից ակնհայտ է, որ համաձայնեցման վարույթը կիրառվում է մեղադրյալի միջնորդությամբ և չի կարող կիրառվել, եթե մեղադրյալը ներկայացրել է նշված միջնորդությունն առանց պաշտպանի հետ խորհրդակցելու:

Թիվ ԼԴ/0220/01/24 քրեական գործով 2024 թվականի օգոստոսի 2-ին կայացած դատական նիստի ձայնագրությունից հետևում է, որ փաստաբան Մերի Պողոսյանը դատական նիստի ընթացքում միջնորդում է համաձայնեցման վարույթի կիրառում, իսկ Դիմողը, պատասխանելով դատարանի հարցերին, նշում է, որ կողմ է համաձայնեցման վարույթին, որ իր պաշտպանն իրեն բացատրել է համաձայնեցման վարույթի հետևանքները և իրեն մեղսագրվող արարքում իր մեղքն ամբողջությամբ ընդունում է:

Փաստաբանը սույն գործով ներկայացրել է նաև թիվ ԼԴ/0220/01/24 քրեական գործով հանրային մեղադրող Մ. Սաֆարյանի գրությունը, որով հաստատվում է, որ 2024 թվականի օգոստոսի 2-ին կայացած դատական նիստի ընթացքում համաձայնեցման վարույթի կիրառման միջնորդության բավարարումից հետո, ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով իր և փաստաբան Մերի Պողոսյանի միջև կայացել են մեղադրյալ Արեն Մեհրաբյանի նկատմամբ նշանակվող պատժի վերաբերյալ բանակցություններ, որոնց արդյունքում չի հաջողվել գալ համաձայնության, քանի որ պատիժը պայմանականորեն չկիրառելու շուրջ իր կողմից համաձայնություն չի տրվել:

Արդյունքում ստացվում է, որ փաստաբանը ոչ միայն իրազեկել է վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին, այլ նաև կատարել է բոլոր անհրաժեշտ գործողությունները, սակայն փաստաբանին չի հաջողվել հասնել համաձայնեցման վարույթով դատախազի հետ պայմանավորվածություն ձեռք բերելուն, ինչը չի կարող հիմք հանդիսանալ փաստաբանի իրավաբանական օգնության տրամադրման բարեխճղությունը կասկածի տակ դնելու և փաստաբանին այդ հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

Հետևաբար Հանձնաժողովը հաստատված չի համարում փաստաբան Մերի Պողոսյանի կողմից Դիմողին բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու փաստը և գտնում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի խախտման մասով փաստաբան Մերի Պողոսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

7.2. Փաստաբան Արայիկ Ներսիսյանի կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի ենթադրյալ խախտումների մասով Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների*

ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս* ***իր մասնագիտական պարտականությունները*** *կատարել ողջամտորեն,* ***բարեխղճորեն****, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. ***վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,***

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 461.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *դատարանը* ***արագացված վարույթ կիրառում է*** *հանրային մեղադրանքով նախնական դատաքննությունների ընթացքում՝* ***մեղադրյալի միջնորդության հիման վրա:***

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ***արագացված վարույթ չի կարող կիրառվել, եթե՝*** *մեղադրյալը չունի պաշտպան կամ* ***միջնորդությունը ներկայացրել է առանց պաշտպանի հետ խորհրդակցելու:***

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանությունից ակնհայտ է, որ արագացված վարույթը կիրառվում է մեղադրյալի միջնորդությամբ և չի կարող կիրառվել, եթե մեղադրյալը ներկայացրել է նշված միջնորդությունն առանց պաշտպանի հետ խորհրդակցելու:

«Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվության համաձայն՝ թիվ ԼԴ/0220/01/24 քրեական գործով 2024 թվականի օգոստոսի 15-ին կայացված դատավաճռով հաստատվել է հետևյալը. *(...) Հանրային մեղադրողի կողմից ներկայացվեց մեղադրանքի փաստական հիմքը և մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը, որից հետո մեղադրյալը հայտնեց, որ իրեն պարզ է ներկայացված մեղադրանքը, համաձայն է մեղադրանքի հետ, առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչում,* ***միջնորդությունը ներկայացրել է կամավոր, մինչև միջնորդությունը ներկայացնելը խորհրդակցել է իր պաշտպանի հետ, գիտակցում է արագացված վարույթ կիրառելու հետևանքները և պնդում է ներկայացված միջնորդությունը*** *(...):*

Նշվածից ստացվում է, որ թիվ ԼԴ/0220/01/24 քրեական գործով դատաքննության ժամանակ Դիմողը հայտարարել է, որ արագացված վարույթ կիրառելու հետևանքները գիտակցելով հանդերձ, պնդում է արագացված վարույթ կիրառելու միջնորդությունը, միջնորդությունը ներկայացնում է կամավոր և այն ներկայացնելուց առաջ խորհրդակցել է իր պաշտպանի հետ: Դիմողի միջնորդությունը բավարարելու հետևանքով դատարանը կայացրել է մեղադրական դատավճիռ, որով Դիմողը ճանաչվել է մեղավոր և դատապարտվել 5 տարվա ազատազրկման: Նման պայմաններում, ազատազրկման ձևով պատիժ նախատեսող մեղադրական դատավճռի առկայությունն ինքնին չի կարող վկայել փաստաբան Արայիկ Ներսիսյանի կողմից Դիմողին բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու ենթադրյալ փաստը: Դիմողը դատաքննության ժամանակ նշել է, որ խորհրդակցել է իր պաշտպանի հետ և միջնորդությունը կամավոր է ներկայացնում: Հետևաբար փաստաբան Արայիկ Ներսիսյանն իր **վստահորդին իրազեկել է վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման**

մասին, ինչը բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց տալու պարտականության բաղադրիչ մաս է հանդիսանում: Փաստաբանը նաև կատարել է Դիմողի գործով բոլոր անհրաժեշտ գործողությունները, չնայած Դիմողի նախկինում մի քանի անգամ դատապարտված լինելու և թիվ ԼԴ/0220/01/24 քրեական գործով իրեն մեղսագրվող արարքը պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքով փորձաշրջանի մեջ գտնվելու ժամանակահատվածում կատարված լինելուն, բացի դա՝ փաստաբանը դատալսումների ժամանակ առարկել է դատախազի առաջարկվող ազատազրկման պատժի տեսակին և առաջարկել է կիրառել տուգանք, կամ գոնե ազատազրկում նշանակելու դեպքում այն պայմանականորեն չկիրառել և սահմանել նոր փորձաշրջան: Փաստաբանը նաև խնդրել է դատական նիստով 5-10 րոպեով ընդմիջում կատարել և ընդմիջումից հետո ներկայացրել է Դիմողի վերաբերյալ թվով երկու բնութագրեր, որոնք կցվել են քրեական գործի նյութերին:

Այսպիսով Հանձնաժողովը հաստատված չի համարում փաստաբան Արայիկ Ներսիսյանի կողմից Դիմողին բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու փաստը և գտնում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի խախտման մասով փաստաբան Արայիկ Ներսիսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

7.3. Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը Կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետի պահանջների խախտման համար ենթակա է պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետի համաձայն՝ *գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:*

Սույն դրույթի նորմատիվ էությունը կայանում է նրանում, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի բարեխիղճ, փոխադարձաբար արդյունավետ և գործարար շրջանառության էթիկայի տեսանկյունից ընդունելի գործելակերպի համար: Միևնույն ժամանակ, փաստաբանի և վստահորդի միջև կնքված գրավոր պայմանագիրը թույլ է տալիս խուսափել տարաձայնություններից կամ դրանց առաջացման դեպքում ծառայում է վեճի լուծման ապացուցողական հիմք:

Ընդ որում, հատուցելի փաստաբանական ծառայությունների համար գրավոր պայմանագրի առկայության պահանջ Կանոնագրքով սահմանելը նշանակում է, որ փաստաբանի և վստահորդի հարաբերություններում գրավոր պայմանագրի առկայությունն ունի ոչ միայն քաղաքացիաիրավական, այլև՝ մասնագիտական-էթիկական նշանակություն, քանի որ գրավոր պայմանագրի առկայությունն է թույլ տալիս վիճելի դեպքերում պարզել կողմերի փոխադարձ իրավունքների ու պարտականությունների ծավալն ու բովանդակությունը, ըստ այդմ նաև՝ պարզել կոնկրետ իրավիճակում փաստաբանի կողմից վարքագծային-էթիկական պահանջների կատարումը:

Հանձնաժողովն ընդգծում է, որ Կանոնագրքի 3.1.3 ենթակետով գրավոր պայմանագրի առումով արվում է մեկ բացառություն՝ թույլատրելով փաստաբանին վստահորդի հետ գրավոր

պայմանագիր կնքել նրա՝ հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից 2 ամսվա ընթացքում, այն էլ, եթե առկա են գործի որոշ առանձնահատուկ հանգամանքներ, որոնք կամ գործի ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

Ավելին՝ Կանոնագրքով, մեծ կարևորություն տալով փաստաբանի և վստահորդի միջև իրավահարաբերությունների գրավոր ամրագրմանը, ցանկալի է համարվում ընդհուպ անհատույց հիմունքներով իրավաբանական օգնության ցուցաբերումը գրավոր պայմանագրի հիման վրա (3.1.5 ենթակետ): Ընդ որում, Կանոնագրքի 3.1.3 ենթակետի շարադրանքից հետևում է, որ գրավոր պայմանագիր կնքելու պարտականությունը հստակորեն դրվում է փաստաբանի վրա: Այսինքն, եթե պատվիրատուն կամ վստահորդը չեն պնդում գրավոր պայմանագրի կնքումը կամ ցանկանում են փաստաբանի հետ հարաբերվել՝ առանց իրավապայմանագրային հիմքի, ապա փաստաբանը պարտավոր է նրանց իրազեկել, բացատրել դրա անթույլատրելիության վերաբերյալ և հրաժարվել առանց պայմանագրի նրանց իրավաբանական ծառայություններ մատուցելուց: Այլ խոսքով՝ փաստաբան-վստահորդ հարաբերություններում գրավոր պայմանագրի առկայությունը փաստաբանի վարքագծային-էթիկական պարտականությունն է:

Սույն գործով Պատասխանող Ալեքսանդր Կոչուբաևն իր 10.09.2024թ. բացատրությամբ նշել է, որ. *«Արեն Մեհրաբյանի պաշտպանությունը ստանձնելու հարցում պայմանավորվածություն ձեռք բերելուց անմիջապես հետո պահանջել եմ վերջիններիս անձը հաստատող փաստաթղթերի լուսանկարները՝ պայմանագիր կազմելու նպատակով:*

Քանի որ Ընկերության հաշիվները եղել են սառեցված և կոնտրա Ընկերությունների խումբ ՍՊԸ-ի բանկային հաշվին փոխանցված որևէ գումար հնարավոր չի եղել օգտագործել, Արմեն Մեհրաբյանին և իր կնոջը խնդրել ենք որպես կանխավճար փոխանցել որոշակի գումար Լոռու մարզի մասնաճյուղի աշխատակից Գարիկ Սահակյանի հաշվեհամարին (...):»:

Սամվելուհի Գրիգորյանի կողմից որպես սույն կարգապահական վարույթում քննարկվող փաստաբանական ծառայությունների վճար, «Կոնտրա ընկերությունների խումբ» փաստաբանական գրասենյակի Սպիտակ քաղաքի մասնաճյուղի ղեկավար Գարիկ Սահակյանի հաշվեհամարին փոխանցվել է 880.000 ՀՀ դրամ գումար, որը հանդիսացել է կողմերի համաձայնությամբ սահմանված՝ թիվ ԼԴ/0220/01/24 քրեական գործի շրջանակներում փաստաբանական ծառայության մատուցման ընդհանուր գումարի մասը: Նաև նշված հիմքով Հանձնաժողովը հաստատված է համարում, որ խնդրո առարկա փաստաբանական ծառայությունները մատուցվել են հատուցելի հիմունքներով, ուստի դրանց մասով գրավոր պայմանագրի առկայությունը պարտադիր բնույթ ունի:

09.09.2024թ. Ծանուցագիր փաստաթղթում նշվել է հետևյալը. *«Հարգելի՜ Սամվելուհի Սամվելի Գրիգորյան, Ձեր և Կոնտրա Լեգեմ փաստաբանական ընկերության միջև ձեռք է բերվել համաձայնություն՝ ԼԴ/0220/01/24 քրեական գործով մեղադրյալ Արեն մերուժանի Մեհրաբյանի դատական պաշտպանությունը Կոնտրա Լեգեմ փաստաբանական ընկերության փաստաբանների կողմից ստանձնելու մասին: Ծառայությունների մատուցման արժեք է սահմանվել 1.200.000 /մեկ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամը, որի մի մասը՝ 880.000/ութ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամը Ձեր կողմից վճարվել է (...):»:*

Վերոգրյալից ակնհայտ է, որ չի եղել գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն, որը կխոչընդոտեր սկզբնական փուլում գրավոր

պայմանագրի կնքմանը, քանի որ հոնորարի չափը, վճարման կարգը, ինչպես նաև հանձնարարության բնույթը և ծավալը ի սկզբանե կողմերը համաձայնեցրել են, հետևաբար իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվեր գործն ընդունելիս՝ անմիջապես, իսկ, եթե նույնիսկ առկա է լիներ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվեր երկու ամսվա ընթացքում, ինչը ևս սույն դեպքում չի կատարվել, որի համար պատասխանատվությունը կրում է փաստաբանական գրասենյակի ղեկավարը՝ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը խախտել է Կանոնագրքի 3.1.3 ենթակետի պահանջը, քանի որ վերջինս, ունենալով իր ղեկավարած փաստաբանական գրասենյակի անունից Դիմողի հետ ի սկզբանե կամ առավելագույնը 2 ամսվա ընթացքում փաստաբանական ծառայությունների վճարովի մատուցման գրավոր պայմանագիր կնքելու և միայն այդպիսի պայմանագրի կնքման պայմաններում փաստաբանական ծառայություններ մատուցելու պարտականություն՝ խախտել է այդ պարտականությունը, այսինքն՝ գրավոր պայմանագիր չի կնքվել, իսկ փաստաբանական ծառայությունները մատուցվել են առանց գրավոր պայմանագրի:

Անդրադառնալով Փաստաբանի կողմից ներկայացված այն դիրքորոշմանը, որ Պատվիրատուի հետ իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր կնքելու վերաբերյալ ձեռնարկվել են բավարար միջոցներ, սակայն հնարավոր չի եղել պայմանագիր կնքել Պատվիրատուի վարքագծի պատճառով՝ նախ հարկ է արձանագրել, որ նշված հանգամանքը չունի որևէ նշանակություն վերը նշված իրավական վերլուծությունների հաշվառմամբ: Նույն հիմնավորմամբ, Հանձնաժողովը սույն կարգապահական վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստերին վերաբերելի չի համարում փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի բացատրությանը կից ներկայացված հայտարարություններն ու 09.09.2024թ. ծանուցագիրը, ինչպես նաև ընդգծում է, որ դրանք նաև արժանահավատ ու բավարար չեն՝ հաշվի առնելով, որ կազմված են փաստաբանական գրասենյակի ներկայացուցիչների կողմից՝ միակողմանիորեն:

Անդրադառնալով 09.09.2024թ. ծանուցագրին՝ պետք է արձանագրել նաև, որ այն չունի ապացուցողական որևէ նշանակություն վերը նշված վերլուծությունների համատեքստում, բացի այդ նշված ծանուցագիրը ուղարկվել է Սամվելուհի Գրիգորյանին, երբ վերջինս արդեն իսկ ներկայացրել էր դիմում ՀՀ փաստաբանների պալատ և նշել էր, որ Պատասխանողն իր հետ չի կնքել պայմանագիր: Հատկանշական է, որ պայմանագիր կնքելու վերաբերյալ Ծանուցագիրը Գրասենյակի տնօրեն Ն. Ալավերդյանի կողմից կազմվել և ուղարկվել է Սամվելուհի Գրիգորյանին 09.09.2024թ.՝ վերջինիս դիմումի հիման վրա կարգապահական վարույթ հարուցելու համար նշանակություն ունեցող տեղեկությունների վերաբերյալ նյութեր ներկայացնելու առաջարկի մասին Պալատի նախագահի 02.09.2025թ. գրությունը ստանալուց մեկ շաբաթ անց կամ իրավաբանական օգնություն ստանալու խնդրով Պատասխանողին դիմելուց և ծառայության վճարի մի մասը ստանալուց՝ 27.03.2024թ., ավելի քան 5 ամիս անց, ինչը ևս բացառում է տվյալ փաստաթղթի հիման վրա փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի վարքագծում քննարկվող կարգապահական խախտման բացակայությունը փաստելու հնարավորությունը:

Այսպիսով, փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի վարքագծում Կանոնագրքի 3.1.3 ենթակետի պահանջի խախտումը, ըստ այդմ նաև՝ իրավական ու փաստական միևնույն հիմքերով Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտումը Հանձնաժողովը համարում է

հաստատված:

7.4. Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի նկատմամբ Կանոնագրքի 3.1.10-րդ ենթակետի պահանջների ենթադրյալ խախտման համար հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 3.1.10-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանն իր մասնագիտական պարտավորությունների բարեխիղճ և որակյալ կատարումից բացի, այլ երաշխավորություն չի կարող տալ, մասնավորապես չի կարող երաշխավորել հանձնարարության կատարման արդյունքը՝ անկախ արդյունքի կանխատեսելիությունից, երբ այդ արդյունքը կախված է դատավորի կամ վարույթն իրականացնող մարմնի որոշումից: Փաստաբանի կողմից քաղաքացիական, քրեական կամ վարչական գործով վստահորդի օգտին դատական ակտի կայացման խոստում տալը, ինչպես նաև քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից վստահորդի օգտին վերջնական որոշում կայացման խոստում տալը, հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ փաստաբանն իրավունք չունի հանձնարարության կատարման **արդյունքի** վերաբերյալ որևէ երաշխիք տալ իր վստահորդին կամ պատվիրատուին, երբ այդ արդյունքը կախված է մասնավորապես դատավորի որոշումից:

Տվյալ դեպքում Դիմողի ներկայացուցիչը, ինչպես իր դիմումում, այնպես էլ 18.12.2024թ. տեղի ունեցած Հանձնաժողովի նիստի ընթացքում վկայակոչել է փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի կողմից իրեն հանձնարարության կատարման արդյունքի վերաբերյալ երաշխիք տալու փաստը, մինչդեռ չի ներկայացրել որևէ վերաբերելի, արժանահավատ ու բավարար ապացույց ի հաստատումն այդ փաստի: Դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացված էլեկտրոնային կրիչում առկա ձայնագրությունները չեն պարունակում որևէ դրվագ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի կողմից պատվիրատուին կամ Դիմողին հանձնարարության կատարման արդյունքի վերաբերյալ երաշխիք տալու հանգամանքի կապակցությամբ:

Հետևաբար Հանձնաժողովը հաստատված չի համարում Ալեքսանդր Կոչուբաևի կողմից հանձնարարության կատարման արդյունքի վերաբերյալ երաշխիք տալու փաստը, ինչով պայմանավորված՝ գտնում է, որ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 3.1.10-րդ ենթակետով սահմանված առերևույթ խախտման մասով ենթակա է կարճման:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի նկատմամբ Կանոնագրքի 3.1.3 ենթակետի խախտման համար պետք է կիրառել «նկատողություն» և «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» կարգապահական տույժերը՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության*

ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է: Սույն խնդրի իրացման հիմնական իրավական միջոցներից մեկը Հանձնաժողովի կարգապահական գործառույթն է, որը դրսևորվում է Օրենքով և Հանձնաժողովի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննարկելով և լուծելով:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է կարգապահական վարույթի քննության յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Փաստաբանին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Տվյալ պարագայում Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ գործի նյութերով հաստատված է համարվում այն, որ «Կոնտրա ընկերությունների խումբ» փաստաբանական գրասենյակի տնօրեն, փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը Պատվիրատուի կամ Դիմողի հետ չի կնքել իրավական օգնություն ցույց տալու մասին գրավոր պայմանագիր, թեև պարտավոր էր դա կատարել ի սկզբանե կամ առավելագույնը 2 ամսվա ընթացքում, եթե վերջինի համար առկա լինեին Կանոնագրքով նախատեսված հիմքերը:

Փաստաբանը իրավական օգնություն ցույց տալու մասին գրավոր պայմանագիր չի կնքել նույնիսկ Կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետում սահմանված երկամսյա ժամկետի խախտմամբ, այդպիսով էլ ավելի է խորացրել առանց այդ էլ ոչ իրավաչափ և Կանոնագրքի պահանջները խախտող արարքում իր մեղքի աստիճանը:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, սակայն գտնում է, որ սույն կարգապահական գործով Փաստաբանի նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ անհրաժեշտ է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» տույժի տեսակը: Միաժամանակ, հետագայում նմանատիպ իրավիճակները կանխարգելելու նպատակով, ինչպես նաև նկատի ունենալով, որ խախտումն իր բնույթով հիմնականում վարքագծային-էթիկական բնույթ ունի՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Փաստաբանի նկատմամբ որպես լրացուցիչ տույժ կիրառել «վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա»» թեմայով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 7-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևի (արտոնագիր՝ թիվ 2606) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետի պահանջների խախտման համար:

2. Կարճել թիվ ԿԳ-24170 կարգապահական վարույթը՝ փաստաբան Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևի (արտոնագիր՝ թիվ 2606) կողմից Կանոնագրքի 3.1.10-րդ ենթակետի պահանջի առերևույթ խախտման, ինչպես նաև փաստաբաններ Մերի Վարդանի Պողոսյանի (արտոնագիր՝ թիվ 3533) և Արայիկ Ներսիսյանի (հավատարմագիր՝ թիվ 117) կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի պահանջների առերևույթ խախտման մասերով:

3. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումը փաստաբաններից յուրաքանչյուրի մասով ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահի ժամանակավոր
պաշտոնակատար՝ **Կարինե Բաղդասարյան**

թիվ ԿԳ-24170-2-Ա
29 հունվարի 2025թ.
ք. Երևան